ՀԱՅՐԵՆԻՔԸ ԵՎ ՆՐԱ ՏԵՐԸ

DOI: 10.52174/2579-2989_2023.2-123

Պատմությունը կրկնվում է երկու անգամ. նախ՝ որպես ողբերգություն, իսկ հետո՝ իբրև խեղկատակություն:

Կ. Մարքս

Հիմնաբառեր. *հայրենիք, պետություն, քաղաքացի, փիրոջ զգացում, հայրենասիրություն, քաղաքական իշխանություն, պետականության և հայրենիքի կորուստ*

Յուրի ՀՈՎԱԿԱՆՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ

1976 թ. ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը՝ «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ: 1987 թ. ստացել է փիլիսոփայական գիտությունների թեկնածուի աստիճան, 1990 թ.՝ դոցենտի կոչում: 2019 թ. օգոստոսին նշանակվել է «Փիլիսոփայության և հայոց պատմության» ամբիոնի վարիչի պաշտոնակատար: Հեղինակ է 6 մենագրության և ավելի քան 40 գիտական հոդվածների:

https://orcid.org/0000-0002-6503-4872

Հայրենիք և Պետություն՝ ազգերի պատմական երկու մեծագույն ձեռքբերումները: Կատարյալ կլիներ, եթե այդ երկու իրողություններն իրենց բովանդակությամբ և ընդգրկումով նույնականանային: Սակայն, նման նույնականացումը գրեթե բացառվում է: Ինչպես Պետությունը, այնպես էլ Հայրենիքը պահանջում է մեծ սեր, նվիրվածություն և տիրոջ զգացում: Առանց այդ զգացումի՝ ավերվում են ոչ միայն «այգին ու ջրաղացը» (ինչպես ասում էր Հր. Մաթևոսյանը), այլև Պետությունն ու Հայրենիքը:

Ուղիղ հարյուր տարի առաջ Հայաստան պետությունը և հայ ժողովուրդը կանգնել էին գրեթե նույն քաղաքական հիմնախնդիրների առաջ, ինչ այսօր: Այն ժամանակ, «կուրացած» Սևրի պայմանագրից, մեր ժողովուրդը հրաժարվեց Ռուսաստանի առաջարկած բարեկամական ձեռքից, որը հետագայում իջավ իր իսկ և պետության գլխին՝ որպես բռունցք, և որի հետևանքով նա կորցրեց պատմական հայրենիքի զգալի մասը: Այսօր հայտնվել ենք նույն կետում. մի կողմից՝ Արևմուտքի անորոշ խոստումների դիմաց քաղաքական վեկտորի փոփոխության հնարավորություն, իսկ մյուս կողմից՝ հայկական պետականությունը կորցնելու իրական սպառնալիք: Եվ այդ ամենը, հեղինակի կարծիքով, այն պատճառով, որ մեզանում բացակայում է տիրոջ վերաբերմունքը Պետության և Հայրենիքի հանդեպ:

Հայաստանի Հանրապետության առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունին, խոսելով Հայրենիքի մասին, գրում է. «Քաղաքացու համար

Հայրենիքը այն Երկիրն է, որի տէրն ու տնօրէնը ինքն է, իր համաքաղաքացիների հետ միասին», իսկ «Հայրենիք կազմելու, այսինքն՝ մի երկրի տէր ու տնօրէն լինելու միակ միջոցը պետութիւն հաստատելն է»[1]: Սակայն, խնդիրը նրանում է, որ. «Պետություն ստեղծում են այն ազգերը, որոնց ցեղային բաղկացութեան գծերը յանգում են ներդաշնակութեան: Այս ներդաշնակութիւնը հնարաւոր է այն դէպքում, երբ ազգութիւնը բաղկացնող խմբակցութիւններից մէկը կարողանում է իր ցեղային խառնուածքը պարտադրել և հարազատել տալ միւսներին: Հայաստանի ներանջատական բնութեան շնորհիւ այս առաջընթացը մեզանում չափազանց դանդաղ կերպով տեղի ունեցաւ: «Արմենիներ»-ը չկարողացան իսպառ նուաճել «հայեր»-ին: Հայաստանում ապրեցին քաղաքական տարբեր զգացումներ: «Արմենիներ»-ը մահը նախընտրեցին ստրկութիւնից, «հայեր»-ը հացի աշխատանքը՝ ազատութիւնից: Մէկը հետապնդեց ազատութեան իդէալը, միւսը՝ շինարարութեան, և հենց դրա շնորհիվ էլ հայոց մշակութային և քաղաքական «ես»-ը մնաց պառակտուած»[2]: Հ. Ասատրյանը, անկասկած, իրավացի է, երբ ասում է, որ «ցեղային բաղկացութեան գծերի» ներդաշնակության բացակայությունը և ներհակ «իդեալների» առճակատումը մինչև այսօր էլ խոչընդոտում են Հայաստանում կայուն և ամուր պետության ստեղծումը: Սակայն, խնդիրն այն է, որ նույնիսկ հզոր պետություն ունենալը դեռևս չի երաշխավորում Հայրենիքի գոյությունը, քանի որ, ինչպես իրավացիորեն նշում է Քաջազնունին. «Քաղաքացին քաղաքացի է և, հետևապէս, ունի Հայրենիք այն չափով միայն, ինչ չափով տէր է երկրին: Պարզ հպատակը, այսինքն՝ քաղաքականապէս իրաւազուրկ մարդը Հայրենիք չունի, ինչպէս չունի Հայրենիք նաև քաղաքականապէս իրաւազուրկ ազգը»[3]:

Հայրենիքի զգացումը, ինչպես այն ընկալում էր ֆրանսիացի փիլիսոփա Պոլ Հոլբախը, սերտորեն կապված է սեփականության հետ՝ «...սեփականությունը, որից կախված է նրա անձնական բարեկեցությունը, հողը, որին նա տիրապետում է և որը նրա համար հայրենիքը դարձնում է թանկ, սեփականությունը, որը նրան հնարավորություն է տալիս իրեն նույնականացնելու իր երկրի հետ»[4]: Այս տեսանկյունից, Հայրենիքը կարող է ոչ միայն չնույնականանալ Պետության և Ծննդավայրի հետ, այլև լինել տարբեր: Անդրադառնալով այս խնդրին՝ ռուս նշանավոր մաթեմատիկոս և հասարակական գործիչ Ա. Վ. Վասիլևն իր «Ինչ է հայրենիքը» գրվածքում նկատում է. «Պետությունը դեռևս հայրենիք չէ: Բանը նրանում է, որ, հողագործության հետ միաժամանակ, որը պետության հիմքն էր, ձևավորվել և զարգացել է նաև ստրկությունը: Հասկանալի է, որ ստրուկները, ապրելով որևէ պետության մեջ, այն երբեք չէին կարող համարել իրենց հայրենիքը՝ ոչ միայն այն պատճառով, որ նրանց մեծ մասը այլ ժողովուրդների պատկանող ռազմագերիներ էին, այլև, առաջին հերթին, այն պատճառով, որ նրանք տվյալ Պետության մեջ չունեին որևէ իրավունք»: Հռոմեական կայսրության օրինակով Ա.Վ. Վասիլևը հիմնավորում է իր տեսակետը. «Հին Հռոմում քաղաքացիական և, առավել ևս, քաղաքական իրավունքներից օգտվում էին միայն կայսրության քաղաքացիները, այսինքն՝ ազնվատոհմիկ ծագումնաբանությամբ մարդիկ, որոնց նախնիները եղել էին տոհմապետներ: Միայն այդ մարդիկ էին կազմում հռոմեական ժողովուրդը, և միայն նրանց համար էր Հռոմեական պետությունը նաև հայրենիք. այն դեպքում, երբ տվյալ պետության հարյուր հազարավոր բնակիչներ չէին համարվում քաղաքացիներ, այսինքն՝ զուրկ էին որևէ իրավունքից: Բնական է, որ նրանք էլ, իրենց հերթին, Հռոմեական կայսրությունը չէին համարում իրենց հայրենիքը, նույնիսկ այն դեպքում, եթե դա իրենց ծննդավայրն էր»[5]: Մտածողը հանգում է այն եզրակացության, որ Պետու-

[1] Հ. Քաջազնունի, Ազգ և հայրենիք, Պեյրութ, 1979, էջ 299 – 300:
[2] Հ. Ասատրյան, Հատընտիր, Եր., 2004, էջ 27:
[3] Նույն տեղում, էջ 302:
[4] П. Гольбах, Избр, пр., в 2 –х т-х., Т. 2, М.; 1963, с. 239:

թյունը և Ծննդավայրը որոշակի անձնավորության համար կարող են դառնալ Հայրենիք կամ չդառնալ՝ կախված այն իրավունքներից, որոնցով օժտված է նա: Մարդու իրավունքների բացակայությունը և պետության քաղաքացի չհանդիսանալը ենթադրում են Հայրենիքի բացակայություն: Իսկ եթե բնակչության զգալի մասը պետությունը չի ընկալում որպես Հայրենիք, իսկ պետությունը, իր հերթին, ի դեմս նրանց, չի տեսնում իր քաղաքացիներին, ապա նման պետության մեջ իշխանությունը կարող է պահպանվել միայն ուժով և բռնությամբ, որն անխուսափելիորեն հանգեցնում է պետության կործանմանը[6]:

Հայրենիքը, լայն իմաստով, այն ամենն է, ինչը հորից կամ նախնիներից ժառանգաբար անցնում է սերունդներին: Հին Հայաստանում նույնպես «Հայրենիք» հասկացությունը կիրառվում էր որպես «հոր կողմից տրված ժառանգություն», որպես «հոր երկիր»: Օրինակ՝ Արշակունիների օրոք Մեծ Հայքի թագավորության ամբողջ տարածքը հայոց թագավորի ժառանգական սեփականությունն էր («Երկիր արքունի»): Հայոց թագավորը հողը, որպես պարգև (որպես սեփականություն), բաժանում էր աստիճանավորներին ու զինվորականներին՝ ժառանգության իրավունքով: Եվ իբրև «սեփականություն» ձեռք բերված հողը կոչվում էր «Հայրենիք»:

Հռոմեացի փիլիսոփա և քաղաքական գործիչ Ցիցերոնն (106–43 թթ. մ.թ.ա.) ասում էր. «Գոյություն ունեն մարդկային հանրույթի կապի տարբեր դրսևորումներ՝ լեզու, ծագումնաբանություն և այլն: Սակայն, ամենասերտ, ամենամոտ և թանկ կապը միևնույն քաղաքացիական հանրույթին (civitas) պատկանելն է: Միայն Հայրենիքն է ներառում ընդհանուր կապվածություն»[7]: Մեզանում բացակայել է հենց այդ կապվածության զգացումը: Մեր գիտակցության մեջ արմատացած է «անիդեալ զգայապաշտի»՝ նյութապաշտ սեփականատիրոջ մտածողությունը. այն, ինչն իմն է, չի կարող լինել նաև ուրիշինը, և հակառակը՝ այն, ինչն ուրիշինն է, իմը չէ, հետևաբար՝ կարող է նաև կործանվել, ավերվել և թալանվել… Այսինքն՝ մենք գրեթե երբեք չենք ունեցել այն գիտակցումը, որ մեր Պետությունը մեր Տունն է և մեր թագավորը՝ մեր Հայրը, ինչի մասին խոսում էր Չինաստանի մեծ իմաստունը՝ Կոնֆուցիոսը: Մենք չունենք այդ ընկալումը: Մեզ համար մեր պետությունը, մեր հայրենիքը, մեր սրբության սրբոցը, մեր խորանը, մեր ամեն ինչը մեր ընտանիքն է… Մենք մեր թագավորին երբևէ չենք ընդունել որպես Հայր, գուցե նաև այն պատճառով, որ այդ թագավորներից և ոչ մեկը մեզ՝ իր հպատակներին, չի նայել իբրև Զավակ…

Բնական է՝ նման զգացողությամբ և գիտակցությամբ հնարավոր չէ պետականություն ստեղծել ու պահպանել: Բնական է նաև այն, որ, զրկվելով ազգային պետականությունից, մենք աստիճանաբար զրկվում ենք պետականությանը հատուկ որոշ հիմնական բաղադրիչներից՝ Պետությունը պաշտպանելու, զինվորագրվելու, Հայրենիքի համար նահատակվելու, ազգային արժեքներն ու սրբությունները պահպանելու պատասխանատվության բարձր գիտակցությունից ու կամքից…

Սուլթան Համիդը 1877–1878 թթ. Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ զենքի կոչեց նաև երկրի քրիստոնյա հպատակներին՝ շրջանցելով դեռևս Օմար խահիֆի (585–644 թթ.) սահմանած արգելքը, համաձայն որի՝ քրիստոնյաները իրավունք չունեին զենք կրելու՝ որպես նման առաքինությունից զուրկ մարդիկ (ստրուկներին չեն զինվորագրում, ստրուկն անարժան է զենք կրելու): Ինչպես նկատում է Լ. Չորմիսյանը. «Արգելքը դրուած էր առաւելապէս անարժան համարուելուն համար Հայերը զէնքի գործածութեան: Քաջ, արի, իյիտ (կտրիճ – Յու. Հ.) մարդուն կը յարմարի զէնքը և ոչ թե կեաւուրի, ստրուկ, վախկոտ Հայուն…»[8]: Սուլթանի որոշումը բարյացկամորեն չընկալեցին ոչ միայն մահմեդականները, այլև քրիստոնյաները: Այն քննարկվեց նաև Կ.Պոլսի Հայոց

[6] Васильев, А., Что такое отечество, Берлин, Т-во И. П. Ладыжникова, 1918, с. 8:
[7] Историки Рима, Н.: 1970, с. 9:
[8] Լ. Չորմիսեան, Համապատկեր Արևմտահայոց մեկ դարու պատմութեան, հ. Ա., 1972, էջ 304:

Ազգային ժողովում և մերժվեց: Թերևս, միակ մարդը, որը գիտակցեց «հրովարտակի» կարևորությունը, Գրիգոր Օտյանն էր, որը Կ.Պոլսի Ազգային Ժողովի բարձր ամբիոնից հայտարարեց, որ այս խնդիրը «...ոչ միայն կարգաւ, այլ բարոյապէս նաև առաջինն է և մայրն է ուրիշ ամէն դարմաններու: Գիտենք, թէ ինչ է Պէտէլը (զինվորական տուրքը - Յու. Հ.) ասքերիյէն: Պէտէլը ասքերիյէն մեր տկարութեան տուրքն է: Հայը, ինչպէս ուրիշ ոչ-մահմեդական ազգեր, հայրենեաց համար արիւն թափելու իբրև անկարող, իբրև անկարող զէնք գործածելու, բոլոր երկրին պաշտպանութիւնը մինակ մէկ ազգ մը վրան առած է, և այս պաշտպանութեան փոխարեն՝ միւս ազգերը հարկ մը կը վճարէն. և այս իրաւունքն է. եթէ մենք մեր հողը չենք պաշտպանէր, ով որ կը պաշտպանէ՝ անոր պարտք մը ունինք. աւելի կարող ազգը՝ տիրող ազգը կ'ըլլայ, և մենք՝ հարկատու. մեր իրաւունքը մեր վճարած հարկին մէջն է: Քանի որ այս վիճակին մէջ կ'ուզենք մնալ, ինչ է մեր գանգատը. պաշտպանութեան իրաւունքը շատ մը իրաւունքներ կ'ենթադրէ և այդպիսի դրութեան մը մէջ հաւասարութիւն անկարելի է: Այդ դրութենէն ազատելով՝ ու երբ քաղաքացիի մը բոլոր զգացումներն արթնանան ի մեզ, երբ զինուրին յատուկ եղած պարտուց գերագոյն զգացումը զարգանայ մեր մէջ ալ, այն ատեն Հայն պիտի գտնէ իր նախնի նկարագիրը, զոր պիտի վերականգնէ՝ գլորման ու ապականման վիճակէն, որ ընկած է դարերով գերութեան վիճակի հետևանօք»: Հետևաբար՝ «...եթէ պատւոյ և քաղաքացիութեան զգացում ունինք ըսէր է, յայտնենք աշխարհին թէ մենք ալ մարդ ենք և արիութեան ընդունակ»[9]: Իրավացի է Օտյանը: Այն ազգը, որն իր Հայրենիքի պաշտպանության պարտականությունը դնում է ուրիշ ազգերի վրա, կամովին նրանց է հանձնում նաև այդ Հայրենիքի Տիրոջ իրավունքը, հաշտվելով նաև այն գիտակցության հետ, որ ինքն այդ Հայրենիքի Տերը չէ կամ, այլ կերպ ասած, ինքը Հայրենիք չունի: Եվ դա վերաբերում է ոչ միայն ազգերին, այլև անհատներին: Հ. Մաթևոսյանը «Տերը» վիպակում գրում է. «Գետափնյա այգին ու ջաղացը մեր պապինն էին եղել՝ այսինքն այն մշակինը, ում ժողովուրդը մեր պապն ու մեզ նրա թոռն է համարում, հետո խառը տարիներին պապը ոտի տակ կորել էր, և ջրաղացն ու այգին լքվել, անտեր քանդվել էին»[10]:

Ոչ միայն այգին ու ջրաղացն էին ավերվել «անտերությունից», այլև Հայրենիքը...

Եվ այսօր՝ գրեթե հարյուր հիսուն տարի հետո նույնը կրկնվում է: Նայում եմ կանաչ մարգագետին դուրս եկած հորթի նման հրճվանք ապրող մեր որոշ քաղաքացիների դեմքերին ու զզվանք ապրում: Ինչո՞ւ են հրճվում. նրա համար, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն այլևս չե՞ն զորակոչվելու Արցախի Հանրապետության բանակ... Մի՞թե չեն գիտակցում, որ Արցախը պաշտպանելով՝ պաշտպանում ենք Հայաստանը, եթե անգամ այնքան ենք այլասերվել քաղաքական «առևտուրների» մեջ, որ Արցախը Հայաստան չենք համարում:

Մեր մեծ զորավարն ու հանճարեղ փիլիսոփան՝ Գարեգին Նժդեհը, իր «Բանտային գրառումներում» շատ տիպական մի օրինակ է բերում ոմն հրեա զորավարի մասին, որը, հռոմեական լեգեոնների առջև նահանջելով, խոր դժգոհության առիթ է տալիս իր բանակին: Զինվորների հարցումին՝ «ինչո՞ւ չի դիմադրում», նա պատասխանում է, թե իրեն ազատ չի համարում աննշան վայրի համար թափելու այն արյունը, որը պահել է Սողոմոնի տաճարի պաշտպանության համար: Սակայն, նահանջը կրնկակոխ շարունակվում է. «Զորավարը, սակայն, կանգ չառաւ նաև Սիոնի պատերի տակ,- ասում է պատմությունը:- Եւ Տիտոսի լեգեոնները կործանեցին Երուսաղեմը»: Ընդհանրացնելով ասելիքը՝ Նժդեհը գրում է. «Կարևորագոյն վայրերի պաշտպանութիւնը ապահովում են նուազ կարևորների յամառ պաշտպանութեամբ միայն: Այսպէ՛ս, և ոչ այլ կերպ: Ըստ իր կարևորութեան՝ «տաճար» է ամէն դիրք, և իբրև այդպիսին՝ պիտի պաշտպանել դա: Չկան ո՛չ աննշան դիրքեր, ո՛չ էլ աննշան

[9] Գր. Օտեան, Սահմանադրական խօսքեր ու ճառեր, դամբանականներ, Կ.Պոլիս, 1910, էջ 86 – 87:
[10] Հ. Մաթևոսյան, Տերը, http://hrantmatevossian.org/m/up/Tery.pdf

գործեր կռուադաշտում: Այնտեղ կարևոր է նշանակալից ամէն ինչ: Եվ, եթէ կայ աննշան մի բան, դա էլ հէնց մարդկային արիւնն է, անգամ զօրավարի արիւնը»[11]:

Թերևս, հոգուս մեղք արած կլինեմ, եթե ասեմ, որ մենք՝ հայերս, սոցիալիստներ ենք՝ մարքս – լենինյան ըմբռնմամբ, ավելին, որպես անհատապաշտ ժողովուրդ՝ մեր մտածողությանն ու գործելակերպին օտար են սոցիալիզմի՝ հավասարության, արդարության և ընդհանուր շահի սկզբունքները, որոշ դեպքերում՝ նույնիսկ ծայրահեղ օտար: Գուցե դրանով է պայմանավորված նաև պետության հանդեպ մեր ունեցած ոչ համակրական վերաբերմունքը, քանի որ պետության սկզբունքը, ըստ Արիստոտելի դասական սահմանման, միությունն է՝ հանուն ընդհանուր բարիքի: Այսինքն՝ մարդը, որպես հանրային կենդանի, չի կարող միայնակ հասնել իր նպատակներին, այդ պատճառով էլ կարիք ունի միավորման՝ հանուն նպատակների իրականացման: Հետևաբար՝ ընդհանուրի շահի գերակայությունը ոչ թե անհատին հակասող վերացականություն է, այլ անհատի շահերից բխող կենսական պահանջ:

Սակայն, պարզվում է, որ մարքս-լենինյան գաղափարները, մասնավորապես՝ «ազգ-պետություն» և «ազգասիրություն-հայրենասիրություն» ըմբռնումների տեսանկյունից, որոշակի աղերս ունեն հայի հոգեբանության հետ:

Վերևում արդեն անդրադարձանք Պոլ Հոլբախին, որը Հայրենիքի հանդեպ սերը համարում էր «ազատության ամենագեղեցիկ պտուղներից մեկը»՝ միաժամանակ, շեշտելով, որ ազատ չի կարող լինել որևէ մեկն առանց սեփականության, որը քաղաքացուն կապում է հայրենի-քի հետ: Նման մոտեցումը հիմք է տալիս ենթադրելու, որ հասարակության մի մասը զրկված է Հայրենիք ունենալու իրավունքից, քանի որ չունի սեփականություն: Համենայն դեպս, ասվածի մեջ որոշակի ճշմարտություն կա: Եվ եթե անգամ նրանց համար նույնը չէ, թե ինչ հայրենիքում են ապրում (միապետական Գերմանիայում, հանրապետական Ֆրանսիայում թե բռնապետական Թուրքիայում), միևնույն է, որպես իրավազուրկ՝ անտարբեր են մնում իրենց երկրի ապագայի, ներառյալ նաև նրա պարտության ու հաղթանակի հանդեպ՝ հնարավոր պատերազմի ընթացքում:

Այսօր հաճախակի է խոսվում քաղաքական գործիչներից մեկի՝ Վ. Մանուկյանի մի արտահայտության մասին. վերջինս դեպի Գյումրի տանող ճանապարհը փակող մարդկանց անվանել էր «բոմժ»: Արդյո՞ք այդ հասկացությամբ նա ցանկացել էր ճանապարհը փակողներին որակավորել որպես անօթևաններ (բնակության որոշակի վայր չունեցողներ) և վիրավորել նրանց: Համոզված եմ՝ ո՛չ: Իմանալով այդ անձնավորության բարեկրթության մակարդակն ու ճանաչելով նրան՝ կարող եմ վստահաբար պնդել, որ նա նկատի է ունեցել ոչ թե «անօթևաններին», որոնք այդպիսին դառնում են հանգամանքների բերումով (նրանց գոյակերպը յուրաքանչյուր կառավարության և պետության անգործության ու ապիկարության հետևանք է), այլ անհայրենիք մարդկանց: Այս իմաստով, անհրաժեշտ է տարբերակել «բոմժ»-ին (բնակության որոշակի հասցե չունեցողին) նման հոգեբանություն, մտածողություն և աշխարհայացք ունեցողից, որի համար ամենակարևորն այն է, որ իր փորը կուշտ լինի և տակը՝ չոր ու գլխին ծածկ ունենա… Սա անասունի այն տեսակն է, որի համար Հայրենիքն արոտավայր է, որը կարելի է նաև լքել, երբ խոտը չորանում է կամ վերջանում… Մարդկային այս տեսակի մասին է խոսում ֆրանսիացի փիլիսոփա Ֆիլիստե Լամենենը, երբ ասում է. «Ո՛չ, ախոռը, որտեղ անասուններն ուտում ու պառկում են, հայրենիք չէ»:

Թեպետ որոշ մարքսիստներ համոզված կերպով պնդել են, որ անհայրենիք է ոչ թե պրոլետարիատը, այլ բուրժուազիան, քանի որ, ինչպես նկատում է ֆրանսիացի տնտեսագետ և քաղաքական գործիչ, մարքսիզմի խոշոր տեսաբան Պ. Լաֆարգը, «կապիտալի հայրենիքն այնտեղ է, որտեղ ավելի մեծ է շահույթի նորման», հեգնանքով ավելացնելով նաև, որ բուրժուազիան, «հանուն մաքուր և սուրբ հայրենասիրության, ցանկանում է, որ ֆրանսիա-

[11] Գ. Նժդեհ, Հատընտիր, Եր., 2001, էջ 288 – 289:

ցիներն ուտեն միայն ֆրանսիական հաց ու միս և հագնեն միայն ֆրանսիական կտորից պատրաստված հագուստ, թեկուզև դրա համար հարկադրված լինեն վճարել 10 կամ 20 տոկոս ավելի, որ, սովորաբար, վճարում են օտարերկրացիները»[12], այնուամենայնիվ, մարքսիստների գերակշիռ մասը հակառակ կարծիքի էր:

Որոշակի ճշմարտություն կա Կ. Մարքսի ու Ֆ. Էնգելսի այն պնդման մեջ, թե պրոլետարները Հայրենիք չունեն, քանի որ ոչինչ չունեն կորցնելու, բացի սեփական շղթաներից: Ճապոնական ասացվածքում էլ իրավացիորեն նշվում է. «Չի եղել, որ մերկն ինչ-որ բան կորցնի»:

Մարքսյան վերոնշյալ դրույթը հետագայում զարգացրել է Մարքսի «հոգեզավակը»՝ Վ. Ի. Լենինը: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին, պատասխանելով ազգայնականների «հայրենիքի պաշտպանության» կարգախոսներին և իր հետևորդներին ուղղված մեղադրանքներին, «Վելիկոռուսների ազգային հպարտության մասին» հոդվածում նա գրել է, որ ռուս պրոլետարիատը սիրում է իր հայրենիքը, իր լեզուն, ու հենց այդ պատճառով էլ նա չի կարող պաշտպանել հայրենիքն այլ կերպ, քան հեղափոխական բոլոր միջոցներով պայքարելով միապետության, կալվածատերերի և կապիտալիստների, այսինքն՝ հայրենիքի ամենավատ թշնամիների դեմ[13]: Շարունակելով նույն միտքը՝ «Պատասխան Պ. Կիևսկուն (Յու. Պյատակովին)» աշխատության մեջ, կրկին անդրադառնալով այդ հարցի հանդեպ մարքսիստների վերաբերմունքին, նա հավելել է. «Հայրենիքի պաշտպանությունը իմպերիալիստական պատերազմում խաբեություն է, սակայն ամենևին խաբեություն չէ դեմոկրատական և հեղափոխական պատերազմում»[14]: Այսինքն՝ սոցիալ-դեմոկրատների համար, ըստ Լենինի, բուն Հայրենիքի գոյության և նրա պաշտպանության խնդիրը պայմանավորված է նրանով, թե ովքեր են կառավարում երկիրը, քանի որ նրանք աշխարհագրական և քաղաքական այդ տարածքը համարում են իրենց Հայրենիքը միայն այն դեպքում, երբ իրենք են քաղաքական իշխանությունը: Իմպերիալիստական պատերազմում հայրենիքի պաշտպանությունը Լենինն անվանում էր «սոցիալ-շովինիզմ»: Բոլշևիկների առաջնորդը հանցագործություն էր համարում այդ պատերազմում որևէ կայսրության կողմը պահելը, ներառյալ՝ նաև Ռուսաստանի, քանի որ «եթե հաղթի Գերմանիան, նա խեղդելու է Բելգիան, Լեհաստանի մի մասը, գուցե նաև Ֆրանսիայի մի մասը և այլն: Եթե հաղթի Ռուսաստանը, նա խեղդելու է Գալիցիան, նաև Լեհաստանի մի մասը, Հայաստանը և այլն»[15]:

Չեմ ցանկանում անդրադառնալ այն խնդրին, որ Հայաստանը «խեղդվեց» հենց խորհրդային իշխանության ձեռքով՝ համաշխարհային պրոլետարական հեղափոխության և մասնավորապես՝ մահմեդական Արևելքը խորհրդայնացնելու խելացնոր երևակայությամբ Թուրքիային ու արհեստածին Ադրբեջանին հանձնելով պատմական Հայաստանի մեծ մասը, շրջափակելով փոքրիկ հանրապետության ճանապարհներն ու կտրելով նրա կապն արտաքին աշխարհի հետ:

Թե ինչու դա պատահեց, լուրջ քննարկման հարց է: Ես առանձնացնում եմ ընդամենը մեկ հանգամանք՝ քաղաքական սխալ դիրքորոշում և իրադարձությունների զարգացման ոչ ճիշտ կանխատեսում: Այս հանգամանքն առանձնացնում եմ ոչ պատահականորեն: Այսօր մենք քաղաքական նույն կետում ենք, ինչ հարյուր տարի առաջ, և դարձյալ նույն անորոշությամբ ենք առաջադրում քաղաքական վեկտորի փոփոխության խնդիրը… Ռուսաստա՞ն, թե՞ Արևմուտք… ՀՅԴաշնակցության գաղափարախոսներից Ռ. Դարբինյանը գրում էր. «…Ներկա պահին չկայ աւելի մեծ թշնամի, քան ռուսն է, և նրա դէմ պէտք է ուղղուած լինի մեր բոլոր ուժերը՝ թէ ֆիզիկական, թէ մտաւոր, թէ բարոյական ներշնչումի, որ մենք կարող ենք կռուել, և պէտք է կռուել

[12] П. Лафарг, Патриотизм буржуазии, Одесса, 1906, с. 10 – 11:
[13] Ленин В.И., О национальной гордости великороссов, ПСС, т. 26, М., 2016, с. 108
[14] Ленин В.И., Ответ П. Киевскому (Ю. Пятакову), Ленин В.И., ПСС, т. 30, М., 2016, с. 69:
[15] Зуйков В. А., В.И. Ленин о защите отечества и современность : https://leninism.su/lenin-now/4188-lenin-v-sovremennom-mire-2011.html?start=8

նրա դէմ էլ նոյնքան սեղմ շարքերով ու անվերապահութեամբ, որքան թուրքերի դէմ... Ռուսաստանը պէտք է մերժուի... ոչ միայն որպէս քաղաքական սիստեմ, այլև իբրև կուլտուրական ազդեցութիւն...»[16]: Դարբինյանն այս միտքն արտահայտել է 1925 թ.: Առնվազն խելագար պետք է լինել՝ ցեղասպանություն ապրած ժողովրդին «նույնքան սեղմ շարքերով» ռուսների դեմ պայքարի կոչ անելու համար: Տրամաբանական հարց է ծագում՝ ո՞րն էր լինելու այդ պայքարի նպատակը. արդյո՞ք հիմնովին կործանել այն որբերին ու թշվառներին, որոնք ցեղասպանությունից մազապուրծ փրկություն գտան Խորհրդային Հայաստանում...

Այս և նման մտածողների պատասխանը զորավար Անդրանիկը տվել էր դեռևս 1907 թ.՝ Կ. Պոլսի դաշնակցական առաջնորդների դեմքին շպրտելով հետևյալ խոսքը. «Արիւն ձեր ի գլուխ ձեր: Ըրեք ինչ որ կ'ուզէք, բայց Ռուսիոյ դռները մեր դէմ մի փակէք: Մենք շատ թշնամի ունենք արդեն, Ռուսիան ալ թշնամի մի ըրէք մեզ և պատճառ մի տաք, որ Կովկասի հայութիւնն ալ թուրքահայոց վիճակին ենթարկուի»[17]:

Լենինի և նրա հետևորդների համար Ռուսաստանը կա՛մ պետք է լիներ բոլշևիկյան, կա՛մ չպետք է լիներ առհասարակ... Եվ մի՞թե նույն մտածողությամբ ու տրամաբանությամբ չէին առաջնորդվում Հայաստանի առաջին հանրապետության իշխանությունները և իշխող քաղաքական ուժը: Այդ մասին հանգամանորեն խոսում է Վ. Նավասարդյանը՝ 1949 թ. հրատարակված «Բոլշևիզմը և դաշնակցությունը» աշխատության մեջ[18]: Նա նշում է, որ ցեղասպանությունից և հայրենազրկումից հետո, երբ քաղաքական զարգացումները հրամայական էին դարձրել հանրապետության «բոլշևիկացումը»՝ որպես միակ ելք ստեղծված իրավիճակում նվազագույն կորուստներով պատերազմից դուրս գալու, մենք մերժեցինք բարեկամական այն ձեռքը, որը հետագայում վերադարձավ իբրև բռունցք: Եվ այդ պատերազմից մենք դուրս եկանք մեծ կորուստներով, հատկապես՝ տարածքային, այն դեպքում, երբ կարող էինք արձանագրել տարածքային և մարդկային մեծ նվաճումներ: Այդ մասին հետագայում խոստովանում է նաև Առաջին հանրապետության ֆինանսների, համատեղությամբ՝ նաև հանրային խնամատարության և վերաշինության նախարարի պաշտոնակատար Համբարձում Տերտերյանը (1884-1955), որը Լևոն Շանթի պատվիրակության կազմում մասնակցում էր Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի միջև ընթացող բանակցություններին: 1954 թ. «Հայրենիք» ամսագրի 2-րդ, 3-րդ, 4-րդ համարներում հրատարակված՝ «Հայաստանի Հանրապետութիւնը և Խորհ. Ռուսաստանի բանակցութիւնները – Լ. Շանթի պատուիրակութիւնը» հոդվածում նա գրում է, որ Արտաքին գործերի ժողկոմ Չիչերինը, ուշադիր լսելով իրենց պատվիրակության բոլոր հարցադրումները, Խորհրդային Ռուսաստանի անունից խոստացել է բավարարել հայերի պահանջը՝ Տաճկահայաստանի որոշ հողամասեր միացնելու Հա-յաստանին և նրա համար ապահովելու ելք դեպի Սև ծով, այն պայմանով, որ Հայաստանը պետք է մերժի Արևմուտքի միջամտությունը և ընդունի Թուրքիայի հետ բանակցությունների ռուսական ծրագիրը:

Նույնը վկայում է նաև պատվիրակության ղեկավար Լևոն Շանթը: 1920 թվականի հունիսի 1–ին Մոսկվայից ուղարկած իր զեկույցում նա գրում է, որ Սովետական Ռուսաստանի կառավարությունը սկզբունքորեն համաձայն էր կնքվելիք պայմանագրում ներառել Արևմտյան Հայաստանի տարածքի որոշ մասերի՝ Հայաստանին միացնելու հարցը և այդ խնդիրը լուծելու համար ցանկանում էր «միջնորդի դերում հանդես գալ Քեմալի և մեր միջև»: Ավելին, հետագայում խոսելով Մոսկվայի բանակցությունների մասին, նա խոստովանում է, որ «բոլշևիկները կճանչնային մեր անկախությունը, մեզի բոլշևիկ դառ-

[16] «Նաիրի» (բացառիկ), 1975, N46-50, էջ 3-4:
[17] Զորավար Անդրանիկ կը խօսի, Պոսթոն, 1994, էջ 38:
[18] Այդ տարբերությունների մասին տե՛ս Վ. Նավասարդյան, Բոլշևիզմը և դաշնակցութիւնը (թռուցիկ ակնարկ), Գահիրե, 1949:

նալու պահանջ չէին ըներ, կուզեին միայն, որ փոխադարձ բարեկամական դաշինք կնքեինք»[19]:

Իրադարձությունների հետագա զարգացման վերլուծությունից տեսնում ենք հետևյալը. ՌԽՖՍՀ արտաքին գործերի ժողկոմի տեղակալ Լևոն Կարախանը (Կարախանյան) Տերտերյանին հրավիրում է իր աշխատասենյակ՝ առկա խնդիրները քննարկելու նպատակով, և հանդիպումից կարճ ժամանակ անց անհետաձգելի ինչ – ինչ գործերի պատճառաբանությամբ դուրս է գալիս աշխատասենյակից՝ խնդրելով, որ Տերտերյանը սպասի իրեն, և այդ խորհրդավոր բացակայության ընթացքում Տերտերյանը Կարախանի սեղանին տեսնում է Այսրկովկասի քաղաքական քարտեզի ուրվագիծը, որի մասին գրում է. «Առաջին հայեացքից նկատեցի, որ երեք հանրապետութիւնների մէջ ամենամեծը Հայաստանն էր, իսկ ամենափոքրը՝ Ազերբէջանը, որ համարեա թէ ամփոփուած էր Ապշերոնեան թերակղզում: Արաքսի ափից սկսեցի բարձրանալ դէպի հիւսիս, որպէսզի մանրամասն ծանօթանամ Հայաստանի սահմաններին՝ գծագրուած քարտէսի համաձայն: Հայաստանի սահմանների մէջ մտնում էր ամբողջ Լեռնային Ղարաբաղը՝ մինչև Եալախ, այնտեղից սահմանը անցնում էր Կուր գետով մինչև Խրամ գետը, յետոյ Բորչալուում Խրամ գետի հունից սահմանը դուրս էր գալիս ու Հայաստանի մէջ էր ներառում Ախալքալաքի և Ախալցխայի շրջանները և վերջինիս բարձունքներից համարեա թէ ուղիղ գծով իջնում էր դէպի Սև ծով՝ Բաթումի ու Փոթիի միջև, Բաթումի նաւահանգիստը իր ամբողջ շրջանով ներառելով Հայաստանի սահմանների մէջ»: Շփոթված Տերտերյանին սթափեցնում է աննկատ ձևով սենյակ մտած Լ. Կարախանի հարցը. «Հը, ինչպե՞ս է, հաւանո՞ւմ եք այսպիսի Հայաստանին»: Անակնկալի եկած Տերտերյանը պատասխանում է. «Մենք այդչափ էլ աշխարհակալներ չենք, ինչպէս դուք եք ենթադրում»[20]:

Այն, որ մենք «աշխարհակալներ» չենք, դա հայտնի է վաղուց, և դրա վկայությունը հայոց պատմությունն է: Բայց այդ մասին չէ, որ ուզում եմ խոսել:

1920 թ. հայ-թուրքական հնարավոր բանակցությունների մասին գրում է նաև Հ. Քաջազնունին՝ Հայաստանի առաջին հանրապետության առաջին վարչապետը: 1920 թ. սեպտեմբերին թուրքերն առաջարկում են բանակցել: Թե ինչի մասին, հստակ չէ: Քաջազնունին ասում է. «Հաւանականօրէն պիտի սկսէին Բաթումից ու Բրեստ-Լիտովսկից և ապա աստիճանաբար զիջելով՝ հասնէին մինչև 1914 թուականի սահմանները, գուցէ մի քայլ ետ գնային, հրաժարուէին նաև Բայազիդից ու Ալաշկերտից: Անհաւանական է, որ սրանից աւելի զիջող լինէին – նոյն իսկ 1920 թ. սեպտեմբերին: Փոխարէնը կը պահանջէին, իհարկէ, որ Հայաստանի կառաւարութիւնը հրաժարուէր Սևրի դաշնագրով նախատեսուած իրաւունքներից»[21]: Հայաստանի կառավարությունը մերժում է այդ բացառիկ հնարավորությունը ևս: Մերժում է, քանի որ, ինչպես խոստովանում է Քաջազնունին, Սևրի դաշնագիրը կուրացրել էր բոլորին:

Առաջին հանրապետության իշխանությունները ոչ միայն հրաժարվում եմ այդ բարենպաստ առաջարկներից, այլև 1920 թ. դեկտեմբերի լույս 3-ի գիշերը ստորագրում խայտառակ և ապօրինի մի պայմանագիր՝ Թուրքիային հանձնելով Ղարսի մարզը, Սուրմալուն, Նախիջևանը, և սա այն դեպքում, երբ չունեին նման իրավունք ընդհանրապես, քանի որ հայկական պատվիրակությունը լիազորված չէր հանդես գալու իր երկրի անունից, քանի որ նա արդեն չէր ներկայացնում իր երկրի իշխանությունը: Ինչպես բնութագրել այս երևույթը. դիվանագիտական անկարողությո՞ւն, իշխանությունների քաղաքագիտական անգրագիտությո՞ւն, իրավիճակի անելանելիությո՞ւն... Թերևս, այս ամենը միավորենք մեկ բառակապակցության մեջ. ազգային շահի դավաճանություն: Դրա-

[19] «Կարո Հակոբյան, Ակնարկ 1921 թվականի փետրվարյան ապստամբության և դրան նախորդող դեպքերի մասին, http://www.aaeurop.com/?p=25412)

[20] «Հայրենիք», 1954 թ., №3, էջ 14, 19:

[21] Հ. Քաջազնունի, Հ.Յ.Դաշնակցութիւնը անելիք չունի այլևս, Եր., 1994, էջ 33:

նով է բացատրվում խորհրդայնացող Հայաստանը մասնատելու, Հայրենիքը թուրքերին նվիրելու պատրաստակամությունը, քանի որ նրանք Հայաստանը պատկերացնում էին սոսկ որպես դաշնակցական իշխանությամբ երկիր, նրանց տրամաբանությամբ Հայաստանի Հանրապետությունը կա'մ պետք է լիներ իրենց իշխանության ներքո, կա'մ չպետք է լիներ: Արդյո՞ք այդ մտածողության արգասիքը չէ՞ր այն արկածախնդրությունը, որ տեղի ունեցավ 1921 թ. փետրվարին (այն օրերին, երբ Մոսկվայում ընթանում էին ռուս-թուրքական բանակցությունները, որտեղ լուծվելու էր նաև ապագա Հայաստանի սահմանների հարցը), և որը հաճախ անվանում են նաև ապստամբություն՝ վարկաբեկելով և ծաղրելով ապստամբություն բառի բուն իմաստը...Բայց սա արդեն այլ քննարկման նյութ է...

XX դարի առաջին կեսի մեր առաջադեմ մտավորականներից մեկը՝ Արշակ Չոբանյանը, քննադատաբար էր վերաբերվում այդ շրջանի իրադարձություններին, մասնավորապես՝ 1921 թ. փետրվարյան հեղափոխությանը, այն բնութագրելով որպես «յուսհատական, աղետաւոր և անել ապստամբութիւն», որը հրահրվում և ղեկավարվում էր դաշնակցության կողմից, «փոխանակ դիմելու... նոր ռեժիմին գերագոյն ղեկավարներուն, Օրժոնոկիձէի մը, կամ նոյն ինքն Լենինին, այդ անտեղի խստութեանց դէմ բողոքելու և անոնց դադարումը խնդրելու համար»: Մինչդեռ «ապստամբություն» նախաձեռնողներն ու կազմակերպիչները գնացին քաղաքացիական պատերազմի ճանապարհով. «...քստմնելի շրջան, ուր հայ արիւնը կը հոսէր հայերու ձեռքով»: Ավելին, դաշնակցությունը, իր իշխանությունը երկարաձգելու համար (մեկ և կես ամսով), Խորհրդային Միության կառավարության դեմ մղած պայքարում «օգնութեան կը կանչէր Քեազիմ Քարապէքիրը, որ դեռ քիչ առաջ Հայաստանը գրաւէր էր, որպէս զի ան իր թուրք զօրքերով գար իրեն միանալու հայ և ռուս համայնաւար ուժերուն դէմ... Թուրք զօրքերը չէին գար բնականաբար իրենց դաշնակից Խորհ. Միութեան ուժերուն դէմ կռուելու, բայց անոր դիւանագէտները այդ դիմումը Մոսկվայի մէջ կը շահագործէին ի վնաս Հայաստանի...»[22]:

Ինքնաբո՞ւխ էր, արդյոք, այդ ամենը: Հազիվ թե: Առնվազն մանկամիտ պետք էր լինել, եթե ոչ՝ ապուշ՝ երեկվա ցեղասպաններին և հայրենազրկողներին կամովին աջակցության կանչելու: Այդ «դիմումի» հետևում հստակ երևում էին Խորհրդային Միության իրական թշնամիների «երկար ականջները»...

Այդ իրադարձություններից անցել է ավելի քան հարյուր տարի, և հայ քաղաքական միտքը Հայաստանի մասնատման՝ Ղարսը և Արդահանը Թուրքիային, Նախիջևանը և Ղարաբաղը Ադրբեջանին «նվիրելու» հարցում մեղադրում է ռուսներին՝ նրանց նույնականացնելով բոլշևիկների հետ, այն դեպքում, երբ այդ բոլշևիկների մեջ ռուսներ գրեթե չկային... Դա գիտեն, իհարկե, նաև քննադատները, ինչպես որ գիտեն, որ հայ-ադրբեջանական հնարավոր պատերազմի դեպքում Արևմուտքը որևէ իրական աջակցություն չի ցուցաբերելու Հայաստանին: Արևմուտքի ծրագրերում անկախ և ինքնիշխան Հայաստան պահպանելու խնդիր չկա, քանի որ նրա համար այս տարածաշրջանում ադրբեջանական նավթից ու գազից ավելի կարևոր է Իրանի և Ռուսաստանի շահերին հարվածելը: Այդ ամենը գիտեն մեր քննադատները, սակայն նրանց համար ցանկալի չէ ճշմարտությունը բարձրաձայնել, հակառակը՝ նրանք ֆինանսավորվում են այդ ամենի մասին չխոսելու և փաստերն աղավաղելու և հատկապես այն հարցի պատասխանը տալու համար, թե ով և ինչու ստեղծեց Ադրբեջանի կամ, այսպես ասած, Շիրվանիի Հանրապետությունը...

Այսօր պատմությունը կրկնվում է. Հայաստանի Հանրապետությունն ու հայ ժողովուրդը կանգնած են նույն հիմնախնդիրների առաջ: Տեղի ունեցավ Արցախյան երկրորդ պատերազմը, որի ընթացքում հինգ հազար զոհ և տասը հազարի հասնող վիրավորներ ունեցանք, և որին հաջորդեց նոյեմբերի 9-ի կապիտուլացիոն պայմանա-

[22] Ա. Չոպանեան, Մեր երեկն ու այսօրը, 1932 – 1933, «Անահիտ», 1933, թ. 3 – 6, էջ 83:

գիրը: Դրանով, սակայն, ողբերգությունը չավարտվեց: Այսօր թուրք զինվորն արդեն Հայաստանի Հանրապետության տարածքում է, և միանգամայն իրական է թուրք – ադրբեջանական ռազմական ներխուժման վտանգը: Բնականաբար, տրամաբանությունը և քաղաքական իրադրությունը պահանջում են, որ մենք հստակեցնենք մեր իրական բարեկամներին և դաշնակիցներին՝ պայմանավորված փոխադարձ շահի գիտակցումով և հարգանքով: Հետևաբար, կա հրամայական՝ դաշնակիցներին ու ազգը համախմբելու, ստեղծված իրավիճակից համեմատաբար նվազ կորուստներով դուրս գալու: Սակայն, տպավորությունն է ստեղծվում, որ մեր իշխանությունների մեջ բացակայում է այդ ամենն իրականացնելու քաղաքական կամքը, և այդ ամենի պատճառը մեր կարճ հիշողությունն է, պատմությունից դասեր քաղելու և պատմության իմաստն ու տրամաբանությունը հասկանալու անկարողությունը, բոլոր հարցերը հենց հիմա և միանգամից լուծելու՝ անհասկանալի շտապողականությունը…

Ս. թ. մարտի 21-ին ՀՀ արտգործնախարարի հետ հանդիպումից հետո ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը մեկ անգամ ևս հայտարարեց. «Բոլորին հայտնի է, որ 2020-ին հնարավորություն կար ավելի շուտ հասնելու կրակի դադարեցմանը, բայց ես դա թողնում եմ պատմաբաններին»: Իհարկե, Լավրովը հրաշալի է հասկանում, որ պատմաբանների խնդիրն անցյալն է, իսկ ինքը խոսում է ներկայի մասին… Հետևաբար՝ պատմաբաններն այստեղ որևէ անելիք չունեն: Անելիք ունեն քաղաքական ուժերը և ժողովուրդը, որոնք, «բերանները ջուր առած», նստել ու սպասում են, թե հերթական հարվածը որտեղից և երբ է գալու…

Քաղաքական վերլուծաբանների շրջանում (հատկապես նրանց համար, որոնց ուղարկել էին Երուսաղեմ՝ ակնկալելով, որ կվերադառնան որպես մահտեսի, սակայն վերադարձան՝ որպես հաջի) Արևմուտքը գերնպատակ է: Համոզված եմ՝ նրանցից ոչ մեկն իրականում չի էլ փորձել հասկանալ, թե մենք Արևմուտքին պե՞տք ենք, արդյոք, որպես դաշնակից: Իհարկե, բոլորն էլ լավ գիտեն և հասկանում են, որ Հայաստանն Արևմուտքին պետք է սոսկ որպես ռազմական հենակետ՝ ընդդեմ Պարսկաստանի և Ռուսաստանի: Գիտեն և լռում են: Նրանք գիտեն, անշուշտ, որ մեր իրական և բնական դաշնակիցներն այս տարածաշրջանում Պարսկաստանն ու Ռուսաստանն են: Գիտեն և դարձյալ լռում են: Իսկ թե ինչու՝ թողնում եմ իրենց խղճին՝ ընդամենը նշելով՝ չունեն Տիրոջ զգացում այս Երկրի և հողակտորի հանդեպ: Կարդում եմ այս մարդկանց մեկնաբանությունները, լսում հարցազրույցները և, որպես մարդ, զարմանում՝ որտեղից այսքան ռուսատյացություն: Առաջին համաշխարհայինի տարիներին թուրքերի շրջանում մի ասացվածք էր շրջանառվում. «Ուզում եք ռազմաճակատի իրավիճակի մասին պատկերացում կազմել, նայեք հայերի դեմքին. եթե նրանք ուրախ են, ուրեմն՝ մենք պարտվում ենք»: Նույն զգացումն այսօր ունենում եմ հայ քաղաքագետների մի մասի դեմքին նայելիս. եթե նրանք ուրախ են, ուրեմն՝ Ուկրաինան ռմբահարել է որևէ ռուսական օդանավակայան կամ նավահանգիստ…

Կարճ ասած, Հայաստանում ոչ միայն քաղաքական ուժերի, այլև որոշ քաղաքացիների մեջ է բացակայում Տիրոջ զգացումը… Յուրաքանչյուր քաղաքական ուժ Հայաստանում պետությունը նույնականացնում է իր հետ, որով և պայմանավորվում է պատմության կրկնությունը… Սակայն, ինչպես Կ. Մարքսն էր ասում. «Պատմությունը կրկնվում է երկու անգամ. նախ՝ որպես ողբերգություն, իսկ հետո՝ իբրև խեղկատակություն»…

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ասատրյան Հ., Հատընտիր, Եր., 2004:
2. Զորավար Անդրանիկ կը խօսի, Պոսթոն, 1994:
3. Հակոբյան Կ., Ակնարկ 1921 թվականի փետրվարյան ապստամբության և դրան նախորդող դեպքերի մասին, http://www.aaeurop.com/?p=25412)
4. Մաթևոսյան Հր., Տերը, http://hrantmatev-ossian.org/m/up/Tery.pdf
5. «Նաիրի» (բացառիկ), 1975, N46-50:
6. Նավասարդյան Վ., Բոլշևիզմը և դաշնակցութիւնը (թռուցիկ ակնարկ), Գահիրե, 1949:
7. Նժդեհ Գ., Հատընտիր, Եր., 2001:
8. Չոպանեան Ա., Մեր երեկն ու այսօրը, 1932 – 1933, «Անահիտ», 1933, թ. 3 – 6:
9. Չորմիսեան Լ, Համապատկեր Արևմտահայոց մեկ դարու պատմութեան, հ. Ա., 1972:
10. Օտեան Գր., Սահմանադրական խօսքեր ու ճառեր, դամբանականներ: Կ.Պոլիս, 1910:
11. Քաջազնունի Հ., Ազգ և հայրենիք, Պեյրութ, 1979:
12. Քաջազնունի Հ., Հ.Յ.Դաշնակցութիւնը անելիք չունի այլևս, Եր., 1994:
13. Васильев, А., Что такое отечество, Берлин, Т-во И. П. Ладыжникова, 1918.
14. Зуйков В. А., В.И. Ленин о защите отечества и современность : https://lenin-ism.su/lenin-now/4188-lenin-v-sovremennom-mire-2011.html?start=8
15. Лафарг П., Патриотизм буржуазии, Одесса, 1906.
16. Ленин В.И., О национальной гордости великороссов, ПСС, т. 26, М., 2016.
17. Ленин В.И., Ответ П. Киевскому (Ю. Пятакову), Ленин В.И., ПСС, т. 30, М., 2016.

Юрий ОВАКАНЯН
Кандидат философских наук, доцент, АГЭУ

ВИДЕНИЕ АРМЯНСКОГО ОБЩЕСТВА

РОДИНА И ЕЕ ХОЗЯИН

Родина и Государство - два величайших исторических достижения народов. Было бы идеально, если бы эти две реальности были идентичны по содержанию и обхвату. Однако такая идентификация практически невозможна. И Государство, и Родина требуют большой любви, преданности и ощущение Хозяина. Без этого чувства разрушаются не только «сад и мельница», как говорил Г.Матевосян, но и Государство и Родина.

Ровно сто лет назад государство Армения и армянский народ столкнулись почти с теми же политическими проблемами, что и сегодня. В то время, ослепленные Севрским договором, мы отказались от благосклонной руки, предложенной Россией, которая позже как кулак обрушилась на голову нашего народа и государства, и в результате мы потеряли значительную часть нашей исторической родины. Сегодня мы находимся в той же ситуации: перед возможностью смены политического вектора из-за неопределенных обещаний Запада, и существует реальная угроза потери армянской государственности. И все это, по мнению автора, по причине отсутствия хозяйского отношения к Государству и к Родине.

Ключевые слова: *Родина, Государство, гражданин, ощущение Хозяина, патриотизм, политическая власть, потерия Родины*

Yuri Hovakanyan
PhD in Philosophy, Associate Professor, ASUE

THE VISION OF THE ARMENIAN SOCIETY

HOMELAND AND ITS OWNER

Homeland and State are two greatest historical achievements of nations. It would be ideal if those two realities were identical in content and scope. However, such identification is almost impossible. Both the State and the Homeland require great love, devotion and a sense of the "Owner". Without that feeling, not only "the garden and the mill", as Hr. Matevosyan used to say, but also the State and the Homeland are destroyed.

Exactly a hundred years ago, the state of Armenia and the Armenian people faced almost the same political problems as today. At that time, blinded by the Treaty of Sevres, we refused the benevolent hand offered by Russia, which later fell like a fist on the head of our people and state. This resulted in the loss of a significant part of our historical homeland. Today we find ourselves in the same situation. Before the possibility of changing the political vector due to the uncertain promises of the West, there is a real threat of losing Armenian statehood. According to the author, this is primarily because we lack the attitude of an owner towards the State and the Homeland.

Keywords: *Homeland, State, citizen, sense of "owner", patriotism, political power, loss of Homeland*